ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մայիսի 2024 թվականի N 773 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի N 2017-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 23-ի «Ոչ սակագնային կարգավորման միջոցների, այդ թվում՝ միակողմանիորեն սահմանվող ոչ սակագնային կարգավորման միջոցների, և տեխնիկական կարգավորման միջոցների պահպանումը հաստատելու կարգը սահմանելու մասին» N 2017-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

1) 4-րդ կետի 2–րդ ենթակետի «ժբ» պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն՝

«ժգ. ռազմական նշանակության արտադրանքի համապատասխան լիցենզիայի հիման վրա տրամադրվող ռազմական նշանակության արտադրանքի արտահանման կամ ներմուծման, առևտրի միջնորդական գործունեության, տարանցիկ փոխադրման համապատասխանության մասին եզրակացություն.».

2) 4-րդ կետի 3-րդ ենթակետի «գ» պարբերությունն ուժը կորցրած չանաչել.

3) 8-րդ և 9–րդ կետերում «11-րդ կետի» բառերը փոխարինել «11-րդ և 12-րդ կետերի» բառերով.

4) 11-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետ՝

«12. Ռազմական նշանակության արտադրանքի համապատասխան լիցենզիայի հիման վրա տրամադրվող ռազմական նշանակության արտադրանքի արտահանման կամ ներմուծման, առևտրի միջնորդական գործունեության, տարանցիկ փոխադրման թույլատվական փաստաթղթերի տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության համապատասխան բնագավառը կարգավորող օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

30.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ